

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/1

12 հոկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.09.2012թ-ի նիստում քննության է առնվել <Տուշպա-Ա> ԱԿ առարկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27.07.2012թ. թիվ 1003735 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.06.2012թ. թիվ 1003735 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Տուշպա-Ա> ԱԿ-ում (այսուհետ նաև կոոպերատիվ) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Արդյունքում 27.07.2012թ-ին կազմվել է 1003735 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 469.836 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված հաշվապահական փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ խախտելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի <ա> կետի և 19-րդ հոդվածի 1-ին մասի <գ> կետի պահանջները, 2010թ. շահութահարկի հաշվարկով համախառն եկամուտն ավել է նվազեցվել 289710 դրամի չափով, որի հետևանքով հարկվող եկամուտը պակաս է ցույց տրվել նույն գումարի չափով:

Համաձայն վերոհիշյալ օրենքի 33-րդ հոդվածի, պակաս ցույց տրված հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է շահութահարկ 57942 դրամ:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները շահութահարկի գծով գանձման է առաջադրվել 124423 դրամ:

<Տուշպա> ԱԿ-ն 2011թ-ի համար <Շահութահարկի հաշվարկ> չի ներկայացրել հարկային տեսչություն:

Համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ մտցնում հարկային մարմնին ներկայացված հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

Ստացված տեղեկությունների հիման վրա և ՕՀՎ 27-րդ բաժնի աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ <Տուշպա> ԱԿ-ն գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ է ներկայացրել Վանաձորի ՏՀՏ, որի արդյունքում իրացման շրջանառությունը թաքցրել է 617200 դրամի չափով, արդյունքում հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել նույն գումարի չափով:

Համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պակաս ցույց տրված հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է շահութահարկ 123440 դրամ (617200X20%): 2011թ-ի 1-ին եռամսյակի համար <Շահութահարկի հաշվարկ> չի ներկայացվել:

Ստուգվող ժամանակաշրջանի վերաբերյալ հաշվապահական փաստաթղթերում չկան համապատասխան նյութաձախսի հաշվարկներ:

Համաձայն <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի նվազագույն շահութահարկը (1 տոկոս) հաշվարկվում է նախորդ ամսվա (եռամսյակի) ընթացքում

ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ:

Շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 273.617 դրամ:

Ստուգման ակտով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել նաև եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, համապատասխանաբար՝ 76.219 դրամ և 120.000 դրամ:

<Տուշպա-Ա> ԱԿ գանգատում մասնավորապես նշված է.

Սույն թվականի հունիսի 11-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից տրված թիվ 1003735 հանձնարարագրի հիման վրա <ՏՈՒՇՊԱ-Ա> ԱԿ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում էլ 20.07.2012թ. կազմվել է թիվ 1003735 ակտի նախագիծը: Վերջինիս առնչությամբ էլ իմ կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացվել են առարկություններ: Սակայն ստացվում է, որ իմ առարկություններն առանց քննության առարկա դարձնելու 27.07.2012թ. ներկայացվել է թիվ 1003735 ակտը:

Սույն առակությանս հետ միաժամանակ պնդում եմ, ինչպես կարող էին ներկայացվածս առակությունները չընդունվել, եթե դեռևս ակտի նախագծին ներկայացված առարկության կետերից մեկով նշվել է, որ <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, որը վկայակոչված է ակտի նախագծում, կորցրել է իր իրավական ուժը: Նման պայմաններում հարց է առաջանում, եթե 27.07.2012թ. ակտում առկա է գրառում, որ դիմումատուիս առարկությունները չեն ընդունվել, ապա ինչպես ստացվեց այն իրողությունը, որ 27.07.2012թ. ակտի 1-ին կետի առաջին պարբերությունում <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը վերափոխվեց <Շահութահարկի մասին> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <գ> կետի, եթե սա արդեն իսկ իմ առարկության առաջին կետի ընդունելի չէ, ապա ի՞նչ է այդ դեպքում: Դեռ ավելին, անգամ նշված հոդվածը կիրառելի չէ սույն գործով, որովհետև եթե անգամ զուտ տեսականորեն ընդունենք, որ իմ կողմից թույլ տրված լինեին այն խախտումները, որոնք վկայակոչված են ակտում, ապա վերջիններս չեն ընկնում ակտում վկայակոչած <Շահութահարկի մասին> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <գ> կետի խախտման տակ: Ստացվում է, որ իմ կողմից ներկայացված առակությունները չեն ենթարկվել պատշաճ ուսումնասիրության:

Վերոգրյալը հիմք ընդունելով, խնդրում եմ քննության առնել դեռևս 27.07.2012թ. ներկայացված 20.07.2012թ. թիվ 1003735 ակտի նախագծի առնչությամբ ներկայացված առարկություններս, որը պնդում եմ 27.07.2012թ. թիվ 1003735 ակտի ընդունումից հետո, որովհետև ինչպես արդեն իսկ նշեցի, իմ կողմից ներկայացված առարկությունները չեն քննարկվել և անհիմն մերժվել են:

Նշված երկու առարկությունների քննության արդյունքում ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով կոոպերատիվի նախագահի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ստուգման ակտի դեմ բերված առարկություններում, ըստ էության, ընդամենը նշված է, որ ստուգման ակտի նախագծում նշվել է կոոպերատիվի կողմից <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտվելու վերաբերյալ, սակայն ստուգման ակտի նախագծի վերաբերյալ առարկությունները ներկայացվելուց հետո արդեն իսկ ստուգման ակտում նշվել է, որ խախտվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <գ> կետի պահանջները:

Վերոգրյալի վերաբերյալ նշվեց, որ ստուգման ակտի նախագծում թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի <զ> կետի փոխարեն, նշվել է <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը: Սակայն ստուգման ակտում հիշատակված վրիպակը ուղղվել է:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված 2010թ. շահութահարկի հաշվարկով համախառն եկամուտն ավել նվազեցված 289710 դրամը, վերաբերվում է կոոպերատիվի կողմից գնման ակտերով կատարված ձեռքբերումներին, որոնց գծով հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններով հաշվարկվել և վճարվել է 11% եկամտահարկ: Սակայն ստուգման ընթացքում հիշատակված գնման ակտերը ստուգումն իրականացնող անձանց չեն ներկայացվել:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ կոոպերատիվը 2010թ-ի հոկտեմբերի 6-ին Վանաձորի ՏՀՏ ներկայացրել է հայտարարություն՝ 2010թ-ի հոկտեմբերի 7-ից գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ: Նշված հայտարարության համաձայն, կոոպերատիվը պարտավորվել է գործունեությունը վերսկսելուց առաջ նախօրոք տեղյակ պահել: Սակայն իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում արձանագրվել է, որ կոոպերատիվը, առանց գործունեությունը վերսկսելու մասին տեղեկացնելու իրականացրել է գործունեություն: Ընդ որում, կոոպերատիվի տնօրենը տվել է գրավոր հայտարարություն՝ իրականացված գործունեության ընթացքում ստացված եկամուտների վերաբերյալ:

Արդյունքում հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕԿՎ 27-րդ բաժնի պետի 18.07.2012թ. որոշումը կիրառվել է <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները՝ ստուգման ընթացքում հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկվել են ՀՀ կառավարության 1998թ. սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ